ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/202

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.12.2018թ. թիվ 27/26-3/23039-18 գրությամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 05.12.2018թ. թիվ 01/578-18 գրության պատճենի հիման վրա, 12.12.2018թ. թիվ 27/26-3/23039-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Արմես Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 12.12.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացվել 27.12.2018թ. և 29.12.2018թ. դրությամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության 07.11.2018թ. թիվ 2733 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 29.12.2018թ. դրությամբ դրոշմանիշային վճարների մասով ունի 19 000 ՀՀ դրամ պարտավորություն:

«Արմես Գրուպ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 17.12.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.12.2018թ. թիվ 01/57818 գրությամբ հայտնել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար էլեկտարական սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/44» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ և խնդրել է սահմանված կարգով միջոցառումներ ձեռնարկել վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու համար:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 17.12.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/202 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/202 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար էլեկտարական սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/44» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին մասնակցելու նպատակով ***27.10.2018թ.*** հայտ է ներկայացրել «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 01.11.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի 6.1 ենթակետով կայացված որոշմամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն թիվ 7-9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 20-րդ, 24-26-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 06.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Արմես Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 19 000 ՀՀ դրամի չափով:***

4. Աճուրդի գնահատող հանձնաժողովը 08.11.2018թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի հայտը թիվ 7-9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 20-րդ, 24-26-րդ չափաբաժինների մասով մերժել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.12.2018թ. թիվ 27/26-3/23039-18 գրությունը, «Բարձրավոլտ էլեկտրոցանցեր» ՓԲԸ-ի 05.12.2018թ. թիվ 01/578-18 գրությունը և կից

փաստաթղթերը, «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 12.12.2018թ. ներկայացված 27.12.2018թ. և 29.12.2018թ. դրությամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքները, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության 07.11.2018թ. թիվ 2733 տեղեկանքը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի

Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն .զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Սույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով հրավիրված նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Այսպիսով, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար էլեկտարական սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/44» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ***27.10.2018թ.*** հայտ է ներկայացրել «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 1 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/44» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 01.11.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի 6.1 ենթակետով կայացված որոշմամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն թիվ 7-9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 20-րդ, 24-26-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 02.11.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 06.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Արմես Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 19 000 ՀՀ դրամի չափով:***

Աճուրդի գնահատող հանձնաժողովը 08.11.2018թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի հայտը թիվ 7-9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 20-րդ, 24-26-րդ չափաբաժինների մասով մերժել է:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 27.10.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 19 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 27.10.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին, միևնույն ժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: Սակայն, ուսումնասիրելով 27.10.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Ուստի հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, գտնում եմ, որ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/44» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.12.2018թ. թիվ 27/26-3/23039-18 գրությամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01267734) գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ